

**ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**Ծածկագիր՝ ՏԿԵՆ-ՆԸ-2022/1Ը-4**

25 / 07 2024թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս քլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և նախարարակազմավորված մասնակից (այսուհետ՝ Մասնակից) «Եվրոասֆալտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պայմանագիրը կնքվում է մարդկային զոհերի, մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդու կենսագործունեության բնականոն պայմանների խախտման հանգեցնող կամ նման իրավիճակներ առաջանալու վտանգի դեպքում հրատապ համարվող կարիքների բավարարման շրջանակում ճանապարհների կառուցման կամ վերակառուցման, կամ հիմնանորոգման աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք) գնման նպատակով:

1.2 Պայմանագիրը գործում է անժամկետ՝ մինչև Մասնակցի կողմից պայմանագիրը դադարեցնելու մասին դիմումը Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվելու կամ էլեկտրոնային եղանակով ծանուցվելու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը:

1.3 Եթե Մասնակիցը նախարարակազմավորված մասնակիցների թվից ճանաչվել է ընտրված, ապա նրա հետ կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

1.4 Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում պայմանագրի 1.3 կետում նշված համաձայնագիրը կնքելու օրվան հաջորդող օրվանից:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ստուգել Մասնակցի նախարարակազմավորման հայտով ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա նախարարակազմավորման հայտը մերժվում է (կնքված նախնական պայմանագիրը լուծվում է)՝ դրա մասին ծանուցելով Մասնակցին, որին կցվում են նաև մերժման (կնքված նախնական պայմանագրի լուծման) մանրամասն հիմնավորումները:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Երեք աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել մասնակցի նախարարակազմավորման հայտարարության կամ տրամադրված իրավերի վերաբերյալ պարզաբանումներ տալու հարցմանը: Հարցման և տրված պարզաբանման մասին տեղեկատվությունը պատվիրատուն միաժամանակ հրապարակում է տեղեկագրում:

2.2.2 Հրավերով հայտի ներկայացման ծանուցում ուղարկել նախարարակազմավորված բոլոր մասնակիցներին:

**2.3 Մասնակիցն իրավունք ունի՝**

2.3.1 Նախարարակազմավորման հայտով ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

2.3.2 Հրավերով հայտի ներկայացման ծանուցում ստանալուց հետո հայտ չներկայացնել:

2.3.3 Դադարեցնել պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով պատվիրատուին: Պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա տվյալ մասնակցի հետ նախկինում կնքված պայմանագրերը: Պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվելու կամ էլեկտրոնային եղանակով ծանուցվելու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Պատվիրատուն տվյալ մասնակցի հետ կնքված պայմանագիրը հեռացնում է տեղեկագրից.

## 2.4 Մասնակիցը պարտավոր է՝

2.4.1 Ընտրված մասնակից ճանաչվելուց հետո ներկայացնել պայմանագրի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է պայմանագրի գնի քսան տոկոսին: Տոկոսային արտահայտությամբ գնային առաջարկների ներկայացման դեպքում, պայմանագրի ապահովման չափը հաշվարկվում է հրավերով սահմանված՝ շինարարական աշխատանքների կատարման խոշորացված արժեքի նկատմամբ:

2.4.2 Հրավերի հիման վրա հայտ ներկայացնելու դեպքում վերահաստատել նախարարակալորման հայտարարությամբ նախատեսված որակավորման պահանջին իր համապատասխանությունը: Մասնակցի որակավորման պահանջին իր համապատասխանությունը համարվում է վերահաստատված, եթե նա հայտով ներկայացնում է դրա մասին գրավոր հայտարարություն:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Շինարարական աշխատանքների գնման դեպքում կնքվելիք պայմանագրի ոչ ավելի, քան երեսուն տոկոսը կարող է իրականացնել ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:


3.2 Հրավերի հիման վրա հայտ ներկայացնելու պահանջի դեպքում այն ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ վերահաստատելով նախարարակալորման հայտարարությամբ նախատեսված որակավորման պահանջին իր համապատասխանությունը:

3.3 Նախարարակալորված մասնակիցների նկատմամբ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով (մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ) նախատեսված որակավորման չափանիշները, դրանց գնահատման պայմանները, կնքվող պայմանագրերի ֆինանսավորման, կատարման և կառավարման պայմանները սահմանվում են օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվող որոշմամբ և կներառվեն ծանուցվող հրավերում:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝

ՀՀ տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարություն  
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,  
ՀՎՀՀ 02815457  
գլխավոր քարտուղար  
Ա. Երիցյան



### Մ Ա Ս Ն Ա Կ Ի Ց՝

«Եվրոասֆալտ» ՓԲԸ  
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ  
Երևանյան 106/1  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
ՀՀ 1570068747860100  
ՀՎՀՀ 02285123  
Տնօրեն  
Վ. Հովհաննիսյան

